ՎԴ/0221/05/24

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՎԵՃԸ ԼՈՒԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

29 մարտի 2024 թվական քաղաք Երևան

ՀՀ Վճռաբեկ դատարանի նախագահ Լիլիթ Թադևոսյանս, ՀՀ Վճռաբեկ դատարանի վարչական պալատի նախագահ Հովսեփ Բեդևյանս, ՀՀ Վճռաբեկ դատարանի քաղաքացիական պալատի նախագահին փոխարինող Արսեն Մկրտչյանս, ՀՀ Վճռաբեկ դատարանի հակակոռուպցիոն պալատի նախագահ Արթուր Դավթյանս, ՀՀ Վճռաբեկ դատարանի քրեական պալատի նախագահ Համլետ Ասատրյանս, նիստում ուսումնասիրելով թիվ ՎԴ/0221/05/24 գործի ենթակայությունը որոշելու նպատակով այն ՀՀ Վճռաբեկ դատարանի նախագահին ուղարկելու վերաբերյալ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի 2024 թվականի մարտի 14-ի որոշումը,

Պ Ա Ր Զ Ե Ց Ի Ն Ք

<u>Գործի դատավարական նախապատմությունը</u>.

1. Հովնան Շահբազյանը 2024 թվականի հունվարի 5-ին հայցադիմում է ներկայացրել (փոստին է հանձնել) ՀՀ վարչական դատարան ընդդեմ Երևանի նոտարական տարածքի նոտար Նունե Սարգսյանի՝ ք. Երևան, Կենտրոն Ջ.Բայրոնի փողոց, 2/1 շենքի թիվ 2 բնակարանի վերաբերյալ 2023 թվականի նոյեմբերի 7-ին

վավերացված առուվաճառքի պայմանագիրը ոչ իրավաչափ ճանաչելու պահանջի մասին:

2. ՀՀ վարչական դատարանի՝ 2024 թվականի հունվարի 17-ի որոշմամբ հայցադիմումը վերադարձվել է՝ այն հիմնավորմամբ, որ ներկայացված պահանջից հստակ չէ, թե ներկայացվել է նոտարի գործողությունների իրավաչափությունը վիճարկելու վերաբերյալ պահանջ, թե գործարքն անվավեր ճանաչելու պահանջ: Ուստի առաջարկվել է ճշտել ոչ հստակ հայցային պահանջները, ինչպես նաև համալրել ոչ բավարար փաստական տվյալները, մասնավորապես՝ ներկայացնել տվյալ նոտարական գործողությունը մերժելու վերաբերյալ ապացույցներ:

3. Հովնան Շահբազյանը 2024 թվականի փետրվարի 12-ին կրկին հայցադիմում է ներկայացրել (փոստին է հանձնել) ՀՀ վարչական դատարան ընդդեմ Երևանի նոտարական տարածքի նոտար Նունե Սարգսյանի՝ վերջինիս կողմից ք. Երևան, Կենտրոն Ջ.Բայրոնի փողոց, 2/1 շենքի թիվ 2 բնակարանի վերաբերյալ 2023 թվականի նոյեմբերի 7-ին վավերացված առուվաճառքի պայմանագիրն անվավեր ճանաչելու պահանջի մասին:

4. ՀՀ վարչական դատարանի՝ 2024 թվականի փետրվարի 20-ի որոշմամբ պահանջն ըստ ընդդատության վերահասցեագրվել է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանին:

5. Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի՝ 2024 թվականի մարտի 14-ի որոշմամբ գործի ենթակայությունը որոշելու նպատակով այն ուղարկվել է ՀՀ Վճռաբեկ դատարանի նախագահին:

6. Գործը ՀՀ Վճռաբեկ դատարանում ստացվել է 2024 թվականի մարտի 20-ին:

<u>Ենթակայության վերաբերյալ վեճի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքները.</u>

7. Հղում կատարելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 10-րդ հոդվածին, 81-րդ հոդվածի 1-ին մասին, 220-րդ հոդվածի 1-ին մասին, ՀՀ

քաղաքացիական դատավարության օրենսգրքի 1-ին հոդվածի 1-ին մասին, 18-րդ հոդվածի 1-ին մասին, ՀՀ Սահմանադրական դատարանի՝ 2009 թվականի փետրվարի 3-ի թիվ ՍԴՈ-787 որոշմամբ արտահայտած իրավական դիրքորոշմանը, ՀՀ Վճռաբեկ դատարանի՝ 2011 թվականի հուլիսի 27-ի թիվ ԵԱՔԴ/0433/02/11, 2016 թվականի ապրիլի 22-ի թիվ ԵՄԴ/1029/02/14, 2022 թվականի մայիսի 13-ի թիվ ԵԴ/35635/02/19 գործերով արտահայտած իրավական դիրքորոշումներին՝ ՀՀ վարչական դատարանը 2024 թվականի փետրվարի 20-ի որոշմամբ պահանջը վերահասցեագրել է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանին՝ հետևյալ պատճառաբանությամբ. *«(…) 2024 թվականի փետրվարի 14-ին դատարանում կրկին ներկայացված հայցադիմումով, Հայցվորը խնդրել է անվավեր ճանաչել Երևան նուրարական տարածքի նուրար Նունե Սարգսյանի կողմից ք. Երևան, Կենտրոն Զ. Բայրոնի փողոց, 2/1 շենքի թիվ 2 բնակարանի վերաբերյալ 2023 թվականի նոյեմբերի 7-ին վավերացված առուվաճառքի պայմանագիրը:*

Պայմանագրի անվավերության հիմքերը սահմանված են քաղաքացիական օրենսգրքով, այսինքն՝ հստակեցված պահանջով վեճը լուծվում է մասնավոր-իրավական նորմերի միջոցով, հետևաբար վիճելի իրավահարաբերությունը կրում է մասնավոր բնույթ:

Նկատի ունենալով, որ հայցվորի պահանջը բխում է մասնավոր իրավահարաբերություններից, հետևաբար դատարանը գտնում է, որ ներկայացված պահանջը ենթակա չէ ՀՀ վարչական դատարանում քննության»[1]:

8. Հղում կատարելով «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» ՀՀ սահմանադրական օրենքի 2-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետին, 20-րդ հոդվածի 1-ին մասին, 24-րդ հոդվածի 1-ին մասին, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 18-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերին, 26-րդ հոդվածի 2-րդ մասին, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասին, 10-րդ հոդվածի 1-ին մասին, 220-րդ հոդվածի 1-ին մասին, ՀՀ

[1] Տե՛ս դատական գործը, թերթեր 73-77:

սահմանադրական դատարանի՝ 2009 թվականի փետրվարի 3-ի թիվ ՍԴՈ-787 որոշմանը, ՀՀ Վճռաբեկ դատարանի՝ 2011 թվականի հուլիսի 27-ի թիվ ԵԱՔԴ/0433/02/11, 2016 թվականի ապրիլի 22-ի թիվ ԵՄԴ/1029/02/14, 2022 թվականի մայիսի 13-ի թիվ ԵԴ/38635/02/19 և 2015 թվականի նոյեմբերի 27-ի թիվ ՎԴ/4901/05/11 գործերով արտահայտած իրավական դիրքորոշումներին՝ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանը 2024 թվականի մարտի 14-ի որոշմամբ գտել է, որ սույն գործը ենթակա չէ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանին և այդ առնչությամբ դիմել է ՀՀ Վճռաբեկ դատարանի նախագահին՝ նշելով հետևյալը. *«(…) Սույն դեպքում ներկայացված հայցադիմումում Հովհան Վասիլի Շահբազյանը նշել է, որ անշարժ գույքի առուվաճառքի պայմանագիրը նուրար Նունե Սարգսյանի կողմից վավերացվել է «Նոտարիատի մասին» ՀՀ օրենքի մի շարք խախտումներով: Մասնավորապես՝ նուրար Նունե Սարգսյանը Հովհան Վասիլի Շահբազյանին չի պարզաբանել ՌԴ-ում նուրարի կողմից տրված Ալլա Ավագյանի անվամբ լրացված գործարքի հնարավոր հետևանքները, չի համեմատել Ալլա Ավագյանի՝ լիազորագրում նշված տվյալները անձնագրում նշված տվյալների հետ (Ալլա Ավագյանի անձնագրի կամ պատճենի բացակայության պատճառով), չի պահանջել սեփականության ձեռքբերման հիմքերը, չի պահանջել սեփականատիրոջ անձնագիրը, առանց պատշաճ փաստաթղթերի համապատասխանության ստուգման, անփույթ աշխատանքի արդյունքում վավերացրել է գործարք՝ թույլ տալով «Նոտարիատի մասին» ՀՀ օրենքի 40-րդ, 41-րդ հոդվածների խախտում: Հայցվորը հավելել է, որ ՀՀ արդարադատության նախարարի 2023 թվականի դեկտեմբերի 6-ի թիվ 93-Ա որոշմամբ նուրար Նունե Սարգսյանի նկատմամբ կիրառվել է «նկատողություն» կարգապահական տույժը՝ իր դիմումի հիման վրա:*

Հայցադիմումի ուսումնասիրությունից հետևում է, որ հայցվորը վիճարկում է նուրարական գործողությունները, որոնց արդյունքում վավերացվել է անշարժ գույքի առուվաճառքի պայմանագիրը, որը փվյալ պարագայում որպես հանրային

իրավահարաբերության կողմ հանդիսացող անձի գործողությունների կատարման վիճարկում է և ենթակա չէ քննության քաղաքացիական դատավարության կարգով:

Նշված համակարգային վերլուծությունների արդյունքում հաստատված փաստերի առկայության պայմաններում գտնում եմ, որ սույն հայցադիմումով ներկայացված հիմնական պահանջը ենթակա է ՀՀ վարչական դատարանի քննությանը»[2]:

<u>Սույն որոշման հիմնավորումները և եզրահանգումը</u>.

9. Սույն գործով բարձրացված իրավական հարցը հետևյալն է. *հիմնավո՞ր է արդյոք Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի հետևությունն այն մասին, որ թիվ ՎԴ/0221/05/24 գործն ըստ հայցի՝ Հովհան Շահբազյանի ընդդեմ Երևանի նոտարական տարածքի նոտար Նունե Սարգսյանի՝ վերջինիս կողմից ք. Երևան, Կենտրոն Ջ. Բայրոնի փողոց, 2/1 շենքի թիվ 2 բնակարանի վերաբերյալ 2023 թվականի նոյեմբերի 7-ին վավերացված առուվաճառքի պայմանագիրն անվավեր ճանաչելու պահանջի մասին, ենթակա է ՀՀ վարչական դատարանի քննությանը:*

10. «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» ՀՀ սահմանադրական օրենքի 2-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ *«Մասնագիտացված դատարաններն են՝*

1) վարչական դատարանը. (...)»:

Նույն օրենքի 20-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը քննում է դատական կարգով քննության ենթակա բոլոր գործերը, բացառությամբ մասնագիտացված դատարանների ենթակայությանը վերապահված գործերի»:*

Նույն օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Վարչական դատարանին են ենթակա Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքով նախատեսված գործերը»:*

---

[2] Տե՛ս դատական գործը, թերթեր 83-85:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 18-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Քաղաքացիական գործերը ենթակա են քննության առաջին ատյանի դատարանում, բացառությամբ «Մանկության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված դեպքերի և հակակոռուպցիոն դատարանին ենթակա գործերի»:*

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ *«Քաղաքացիական են համարվում իրավունքի մասին վեճի հետ կապված բոլոր գործերը, բացառությամբ Հայաստանի Հանրապետության վարչական դատարանի (...) կամ Սահմանադրական դատարանի իրավասությանը վերապահված գործերի»:*

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 26-րդ հոդվածի համաձայն՝ *«(...) 2. Դատարանը յոթնօրյա ժամկետում որոշում է կայացնում վարչական դատարանից վերահասցեագրված հայցադիմումը վարույթ ընդունելու կամ գործը Վճռաբեկ դատարան ուղարկելու մասին, եթե համաձայն չէ գործի ենթակայությանը:*

(...)

6. *Սույն հոդվածի 2-րդ և 3-րդ մասերով նախատեսված դեպքերում Վճռաբեկ դատարանի նախագահը և Վճռաբեկ դատարանի բոլոր պալատների նախագահները գործը Վճռաբեկ դատարանում սրանալու պահից տասնօրյա ժամկետում որոշում են գործի ենթակայությունը:*

7. Սույն հոդվածի 6-րդ մասով նախատեսված որոշումն ընդունելու համար Վճռաբեկ դատարանի նախագահը հրավիրում է նիստ՝ իր և Վճռաբեկ դատարանի բոլոր պալատների նախագահների մասնակցությամբ, որն իրավազոր է, եթե դրան մասնակցում են նիստին մասնակցելու իրավունք ունեցող բոլոր անձինք:

8. Սույն հոդվածի 6-րդ մասով նախատեսված որոշումն ընդունվում է նիստին ներկա անձանց ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ: Քվեարկելիս ձեռնպահ մնալ չի թույլատրվում: Որոշմանը կողմ քվեարկած դատավորների կազմից և նրանց կողմից որոշված դատավորը կազմում է որոշման նախագիծը:

9. Սույն հոդվածով սահմանված կարգով որոշված դատարանը համարվում է իրավասու դատարան:

10. Սույն հոդվածի 6-րդ մասով սահմանված կարգով գործի ենթակայությունը սահմանելու մասին որոշում կայացվելու դեպքում չի կարող վերաքննիչ բողոք բերվել սույն օրենսգրքի 365-րդ հոդվածի 2-րդ մասի 11-րդ կետի հիմքով այն պատճառաբանությամբ, որ գործը ենթակա չի եղել քննության քաղաքացիական դատավարության կարգով»:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 126-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ *«Առաջին ատյանի դատարանը մերժում է հայցադիմումի ընդունումը, եթե գործը ենթակա չէ քննության քաղաքացիական դատավարության կարգով»:*

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 10-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Վարչական դատարանին ընդդատյա են հանրային իրավահարաբերություններից ծագող բոլոր գործերը, (...)»:*

Նույն օրենսգրքի 220-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Վարչական դատարանին ընդդատյա են՝*

1) նուրարական գործողության կամ նուրարական գործողության կատարումը մերժելու իրավաչափությունը վիճարկելու վերաբերյալ գործերը.

2) նուրարական գործողության կամ նուրարական գործողության կատարումը մերժելու արդյունքում պատճառված վնասը հատուցելու վերաբերյալ գործերը»:

«Նոտարիատի մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Նուրարն իր գործունեությունն իրականացնում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրության, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի (...), նույն օրենքի, այլ օրենքների և իրավական ակտերի ու Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերի (...) հիման վրա»:*

«Նոտարիատի մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի համաձայն՝ *«Նուրարն արդարադատության իրականացմանը նպաստող հանրային ծառայություններ իրականացնող անձ է, որը Հայաստանի Հանրապետության*

անունից, Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը և օրենքներին համապատասխան, իրականացնում է նույն օրենքով նախատեսված նոտարական գործողություններ և ծառայություններ: Նոտարի կարգավիճակի առանձնահատկությունները սահմանվում են միայն նույն օրենքով:

Նոտարը նոտարական գործողություններ իրականացնում է փաստաթղթեր վավերացնելու կամ վավերացված փաստաթղթեր պրպամադրելու կամ օրենքով նախատեսված այլ գործողություններ կատարելու միջոցով: (...) »:

«Նոտարիատի մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Անձը, որի շահերը շոշափում է նոտարի գործողությունը կամ անձը, որին մերժվել է նոտարական գործողություն կատարելը, կարող է կատարված նոտարական գործողությունը կամ նոտարական գործողության կատարումը մերժելը բողոքարկել դատարան»:*

«Նոտարիատի մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ *«Նոտարն իրականացնում է հետևյալ նոտարական գործողությունները. վավերացնում է գործարքներ (պայմանագրեր, կտակներ, լիազորագրեր, համաձայնագրեր և այլն)»:*

11. ՀՀ Վճռաբեկ դատարանը *Դավիթ և Լիլիթ Հաբեթյաններն ընդդեմ ՀՀ արդարադատության նախարարության Կենտրոն նոտարական տարածքի նոտար Էմմա Շաբոյանի, երրորդ անձ Սամվել Հապետյան* վարչական գործով 2015 թվականի հուլիսի 29-ի որոշմամբ եզրահանգել է. *«(...) Նոտարների կողմից հանրային գործառույթներ իրականացնելու հանգամանքը կանխորոշում է նոտարների հանրային-իրավական կարգավիճակը և պայմանավորում է նրանց գործունեության նկատմամբ արդյունավետ դատական վերահսկողության իրականացման անհրաժեշտությունը: Ըստ այդմ, օրենսդիրը «Նոտարիատի մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի 1-ին մասով սահմանել է, որ նոտարական գործողությունը կամ նոտարական գործողության կատարումը մերժելը կարող են բողոքարկվել դատարան: Ընդ որում, նոտարական գործողության կամ նոտարական գործողության կատարումը մերժելու իրավաչափությունը վիճարկելու,*

ինչպես նաև նուրարական գործողության կամ նուրարական գործողության կատարումը մերժելու արդյունքում պատճառված վնասը հատուցելու վերաբերյալ գործերը քննվում են վարչական դատարանի կողմից՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով նախատեսված կարգով: Օրենսդիրը ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի՝ «Նուրարի գործողությունների իրավաչափության վերաբերյալ գործերի վարույթը» վերտառությամբ 31-րդ գլխի 220-222-րդ հոդվածներով սահմանել է նուրարական գործողության կամ նուրարական գործողության կատարումը մերժելու իրավաչափությունը վիճարկելու, ինչպես նաև նուրարական գործողության կամ նուրարական գործողության կատարումը մերժելու արդյունքում պատճառված վնասը հատուցելու վերաբերյալ գործերի քննության կարգը»[3]:

11.1. Հանրային և մասնավոր իրավահարաբերությունների տարանջատման հարցին ՀՀ Վճռաբեկ դատարանը մանրամասն անդրադարձ է կատարել *«Վեստ» ՍՊԸ-ն ընդդեմ ՀՀ էկոնոմիկայի նախարարության մրցավոր սեփականության գործակալության, երրորդ անձ <<ՄաքԴոնալդս Քորփորեյշն>> ընկերություն* վարչական գործով կայացված որոշման շրջանակներում՝ արձանագրելով հետևյալը. *«(…) [Հ]անրային իրավահարաբերությունը մասնավոր հարաբերությունից տարանջատվում է թե՛ սուբյեկտային կազմով, թե՛ բովանդակությամբ և թե՛ օբյեկտով: Այդ տարրերն առանձին-առանձին անհրաժեշտ են, իսկ իրենց համակցության մեջ բավարար են, որպեսզի փաստվի իրավահարաբերության հանրային լինելու հանգամանքը: Իրավահարաբերությունը հանրային հատկանիշով բնութագրելու համար նախևառաջ անհրաժեշտ է, որ հարաբերության կողմ հանդես գա հանրային իշխանական լիազորություններով օժտված սուբյեկտը (վարչական մարմիններ, դրանց պաշտոնատար անձիք, այդ թվում պետական և համայնքային ծառայողներ): Մինչդեռ հանրային իշխանական*

---

[3] Տե՛ս ՀՀ Վճռաբեկ դատարանի՝ *Դավիթ և Լիլիթ Հաբեթյաններն ընդդեմ ՀՀ արդարադատության նախարարության Կենտրոն նուրարական տարածքի նուրար Էմմա Շաբոյանի, երրորդ անձ Սամվել Հապեթյան* ՝ վարչական գործով 2015 թվականի հուլիսի 29-ի թիվ ՎԴ/1836/05/14 որոշումը:

լիազորություններով օժտված սուբյեկտի՝ իրավահարաբերության կողմ լինելը դեռևս չի նշանակում, որ իրավահարաբերությունը հանրային բնույթի է, քանի որ հանրային բնույթը՝ որպես իրավահարաբերության բնութագրիչ, ծավալային առումով ներառում է իրավահարաբերության թե՛ սուբյեկտային կազմը, թե՛ օբյեկտը, թե՛ բովանդակությունը և ի հայտ է գալիս միայն վերոնշյալ երեք տարրերի համակցությամբ: (…) [Հ]անրային է այն իրավահարաբերությունը, որում կողմերից մեկի դերում անպայմանորեն հանդես է գալիս հանրային իշխանական լիազորություններով օժտված սուբյեկտը, որն այդ հարաբերության ընթացքում հանրային շահի իրացման կապակցությամբ իրացնում է օրենքով սահմանված իր հանրային իշխանական լիազորությունները (…)»[4]:

11.2 ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 5-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Գործի փաստական հանգամանքները դատարանը պարզում է ի պաշտոնե («ex officio»)»:*

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ *«Դատարանը մատնանշում է հայցադիմումներում առկա ձևական սխալները, առաջարկում է ճշտել ոչ հստակ հայցային պահանջները, ոչ ճիշտ հայցատեսակները փոխարինել պատշաճ հայցատեսակներով, տարբերակել հիմնական և ածանցյալ պահանջները, համալրել ոչ բավարար փաստական տվյալները, ինչպես նաև պահանջում է, որ ներկայացվեն գործի փաստական հանգամանքները պարզելու և գնահատելու համար անհրաժեշտ բոլոր ապացույցները»:*

ՀՀ Վճռաբեկ դատարանն իր մի շարք որոշումներում անդրադարձ է կատարել գործի փաստերն ի պաշտոնե քննելու սկզբունքի էությանը:

Այսպես, *«(…) [Գ]ործի փաստական հանգամանքներն ի պաշտոնե պարզելու ("ex officio") սկզբունքի համաձայն՝ դատարանի ակտիվ դերակատարությունն արտահայտվում է, մասնավորապես, որոշակի դատավարական գործողություններ կատարելիս դատավարության մասնակիցներին օժանդակելու՝ վարչական*

[4] Տե՛ս ՀՀ Վճռաբեկ դատարանի՝ *«Վեափ» ՍՊԸ-ն ընդդեմ ՀՀ էկոնոմիկայի նախարարության մրցավոր սեփականության գործակալության, երրորդ անձ <<ՄաքԴոնալդս Քորփորեյշն>> ընկերություն*՝ վարչական գործով 2016 թվականի ապրիլի 22-ի թիվ ՎԴ/0830/05/14 որոշումը:

դատարանի պարտականությամբ: Այսպես, գործնականում հնարավոր են դեպքեր, երբ ֆիզիկական և իրավաբանական անձինք՝ որպես վարչական դատավարության մասնակիցներ, ակնկալելով վարչական դատավարության կարգով վերականգնել իրենց խախտված իրավունքները, հայցադիմումը ներկայացնում են ձևական սխալներով, ճիշտ չեն ընտրում ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով սահմանված համապատասխան հայցատեսակը կամ ճիշտ չեն ձևակերպում իրենց հայցային պահանջները կամ ճիշտ չեն տարբերակում հիմնական ու ածանցյալ պահանջները կամ ներկայացնում են ոչ բավարար փաստական տվյալներ: Նշված դեպքերում վարչական դատարանի՝ դատավարության մասնակիցներին օժանդակելու պարտականությունը ստանում է գործնական մեծ նշանակություն, քանի որ հայցադիմումներում առկա ձևական սխալները մատնանշելու, ինչպես նաև ոչ հստակ հայցային պահանջները ճշտելու, ոչ ճիշտ հայցատեսակները պատշաճ հայցատեսակներով փոխարինելու, հիմնական և ածանցյալ պահանջները տարբերակելու, ոչ բավարար փաստական տվյալները համալրելու վերաբերյալ դատավարության մասնակիցներին առաջարկ անելու վարչական դատարանի պարտականության պատշաճ կատարման պայմաններում ապահովվում է ոչ միայն արդյունավետ դատաքննությունը, այլ նաև անձի խախտված իրավունքների արդյունավետ դատական պաշտպանությունը» [5]:

ՀՀ Վճռաբեկ դատարանը գտել է, որ *«(...) [Վ]արչական դատարանի կողմից ոչ ճիշտ հայցատեսակը պատշաճ հայցատեսակով փոխարինելու (պատշաճ հայցատեսակը մատնանշելու) վերաբերյալ հայցվորին առաջարկ անելու պարտականությունը կարող է կատարվել նաև գործի հարուցման փուլում: Ըստ ՀՀ Վճռաբեկ դատարանի՝ հայցադիմումի ընդունելիության (գործի հարուցման) փուլում*

[5] Տե՛ս ՀՀ Վճռաբեկ դատարանի՝ *Ալեքսանդր Կարապովն ընդդեմ Երևանի քաղաքապետարանի*՝ թիվ ՎԴ/4315/05/14 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 2016 թվականի ապրիլի 22-ի որոշումը:

նշված դատավարական գործողությունը պետք է կատարվի հայցադիմումը վերադարձնելու մասին որոշման շրջանակներում»[6]:

ՀՀ Վճռաբեկ դատարանը մեկ այլ գործով արձանագրել է, որ *«(...) Դատական ակտի ինչպես հիմնավորումներն ու պատճառաբանությունը, այնպես էլ եզրահանգումները պետք է հասցեատերերի համար լինեն որոշակի և կանխատեսելի՝ վերջիններիս համար ապահովելով պարշաճ վարքագծի հստակ ընտրության հնարավորություն: Դատական ակտի որոշակիության և կանխատեսելիության որակների միջոցով պետք է բացառվի կողմերի հարաբերություններում անորոշությունը, ինչպես նաև դատական ակտի բովանդակության տարընկալումներն ու տարընթերցումները: Դատական ակտով կողմերից պահանջվող համապատասխան վարքագիծը պետք է ձևակերպվի հնարավորինս միանշանակ ու հստակ, որպեսզի կողմը հնարավորություն ունենա պարշաճ կերպով կատարել դատական ակտի պահանջը:*

Վերոհիշյալի հիման վրա Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ոչ ճիշտ հայցատեսակը ճիշտ հայցատեսակով փոխարինելու վերաբերյալ մատնանշում կատարելու ՀՀ վարչական դատարանի պարտականության պարշաճ կատարումը, ի թիվս այլնի, պետք է ենթարկվի հետևյալ պահանջներին.

- հայցադիմումի ընդունելիության փուլում ճիշտ հայցատեսակի մատնանշումը պետք է կատարվի այդ պարտականությունը կատարելու համար անհրաժեշտ իրավական և փաստական հիմքերի բավարար համակցության առկայության դեպքում միայն: Եթե հայցադիմումում ներկայացված փաստերը և հայցադիմումին կից ապացույցները բավարար հիմք չեն ձևավորում ճիշտ հայցատեսակ մատնանշելու համար, ապա ճիշտ հայցատեսակ մատնանշելու պարտականության կատարումը պետք է կատարվի գործը դատաքննության նախապատրաստելու փուլում,

---

[6] Տե՛ս ՀՀ Վճռաբեկ դատարանի՝ *Վարուժան Ավետիքյանն ընդդեմ ՀՀ արդարադատության նախարարության դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության*՝ թիվ ՎԴ/3804/05/15 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 2017 թվականի մարտի 14-ի որոշումը:

- դատական պրակտիկայում պետք է բացառվի այն իրավիճակը, երբ հայցվորը կրկին ներկայացված հայցադիմումով ընդունում է հայցադիմումը վերադարձնելու որոշմամբ կատարված մատնանշումը, սակայն դատարանը կրկին ներկայացված հայցադիմումով լրացված փաստերի ու ապացույցների հետազոտման արդյունքում կատարում է մեկ այլ հայցատեսակի մատնանշում՝ կրկին վերադարձնելով հայցադիմումը,

- ճիշտ հայցատեսակի մատնանշումն իր բովանդակությամբ պետք է լինի որոշակի, հստակ ու միանշանակ՝ հիմնված հայցադիմումում ներկայացված փաստերի և կից ապացույցների ամբողջական հետազոտման ու գնահատականի վրա, հայցադիմումը վերադարձնելու որոշումից հայցվորի համար պետք է միանշանակորեն պարզ լինի, թե կոնկրետ ինչ հայցատեսակ է մատնանշվել, որպեսզի վերջինս հնարավորություն ունենա հայցադիմումը կրկին ներկայացնելիս իր վարքագիծը համապատասխանեցնել հայցադիմումը վերադարձնելու որոշման պահանջներին»[7]:

12. Սույն որոշման 10-11.2-րդ կետերում վկայակոչված իրավադրույթների վերլուծությունից և մեջբերված իրավական դիրքորոշումներից հետևում է, որ օրենսդիրն առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանին է վերապահել այն բոլոր գործերը, որոնց քննությունը վերապահված չէ մասնագիտացված դատարաններին, այդ թվում՝ վարչական դատարանին: Միևնույն ժամանակ, օրենսդիրը սահմանել է վարչական դատարանի ընդդատության շրջանակը, որում ներառված են հանրային իրավահարաբերություններից բխող վեճերի վերաբերյալ գործերը: Փաստորեն, որևէ դատական գործի՝ վարչական կամ առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանում քննության ենթակա լինելու հարցը որոշվում է՝ հիմք ընդունելով այն

[7] Տե՛ս ՀՀ Վճռաբեկ դատարանի՝ *Տիգրան Սահեմյանն ընդդեմ ՀՀ կառավարության կոմիտեի*՝ թիվ ՎԴ/5005/05/22 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 2023 թվականի դեկտեմբերի 8-ի որոշումը:

իրավահարաբերության բնույթը (մասնավոր կամ հանրային), որից բխող վեճը հանձնվում է դատարանի քննությանը:

Ընդ որում, իրավահարաբերությունը որպես հանրային որակելու համար անհրաժեշտ է, առաջին հերթին, բացահայտել իրավահարաբերության տարրերը՝ օբյեկտը, սուբյեկտը և բովանդակությունը:

Հանրային իրավահարաբերությունների շարքում օրենսդիրը, ի թիվս այլ գործերի, դիտարկել է նաև նոտարի գործողությունների իրավաչափությունը վիճարկելու վերաբերյալ վեճերը, որոնց՝ հանրային իրավահարաբերություններից բխելու փաստը պարզելիս, դատարանը նախ պետք է բացահայտի, թե արդյոք քննության ենթակա վեճի հիմքում հայցվորի կողմից դրվել է նոտարական գործողությունների վիճարկումը, թե այն ծագել է մասնավոր իրավունքի ոլորտում կոնկրետ հարցի կարգավորման կապակցությամբ:

Հարկ է նշել, որ այն դեպքում, երբ դատարանը հայցադիմումում ներկայացված փաստերի և հայցադիմումին կից ներկայացված ապացույցների ամբողջական հետազոտման և գնահատման արդյունքում հանգում է հետևության, որ ներկայացվել է ոչ ճիշտ ձևակերպված հայցապահանջ, ապա դատարանը պարտավոր է հայցադիմումի ընդունելիության փուլում հայցադիմումը վերադարձնելու մասին որոշմամբ մատնանշել ճիշտ ձևակերպված այնպիսի հայցապահանջ, որն իր բովանդակությամբ կլինի հնարավորինս որոշակի, հստակ ու միանշանակ, և հայցվորի համար միանշանակորեն պարզ կլինի, թե հայցադիմումը վերադարձնելու մասին որոշմամբ ինչպիսի հայցապահանջ է մատնանշվել վերջինիս, ըստ այդմ՝ հայցադիմումը կրկին ներկայացնելիս իր վարքագիծը համապատասխանեցնել դատական ակտի պահանջներին:

Այսինքն՝ այն դեպքում, երբ հայցադիմումում նշված հայցվորի փաստարկներից և հայցադիմումին կից ներկայացված ապացույցներից հետևում է, որ ներկայացվել է հանրային իրավահարաբերությունից բխող հայց, սակայն հայցապահանջը հստակ ձևակերպված չէ, ապա դատարանը պետք է հայցադիմումը վերադարձնելու մասին որոշմամբ կատարի այնպիսի մատնանշում՝ հստակ նշելով հանրային

իրավահարաբերությունից բխող, համապատասխան վեճի բովանդակությանը համապատասխան, ճիշտ ձևակերպված հայցապահանջը, որը հնարավորություն կընձեռի ՀՀ վարչական դատավարության կարգով քննության առնելու հայցվորի պահանջը:

13. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից հետևում է, որ.

- Հովնան Շահբազյանը 2024 թվականի հունվարի 5-ին հայցադիմում է ներկայացրել (փոստին է հանձնել) ՀՀ վարչական դատարան ընդդեմ Երևանի նոտարական տարածքի նոտար Նունե Սարգսյանի՝ ք. Երևան, Կենտրոն Ջ.Բայրոնի փողոց, 2/1 շենքի թիվ 2 բնակարանի վերաբերյալ 2023 թվականի նոյեմբերի 7-ին վավերացված առուվաճառքի պայմանագիրը ոչ իրավաչափ ճանաչելու պահանջի մասին[8],

- ՀՀ վարչական դատարանը 2024 թվականի հունվարի 17-ի որոշմամբ հայցադիմումը վերադարձրել է՝ այն հիմնավորմամբ, որ ներկայացված պահանջից հստակ չէ, թե ներկայացվել է նոտարի գործողությունների իրավաչափությունը վիճարկելու վերաբերյալ պահանջ, թե գործարքն անվավեր ճանաչելու պահանջ: Ուստի առաջարկվել է ճշտել ոչ հստակ հայցային պահանջները, ինչպես նաև համալրել ոչ բավարար փաստական տվյալները, մասնավորապես՝ ներկայացնել տվյալ նոտարական գործողությունը մերժելու վերաբերյալ ապացույցներ[9],

- Հովնան Շահբազյանը 2024 թվականի փետրվարի 12-ին կրկին հայցադիմում է ներկայացրել (փոստին է հանձնել) ՀՀ վարչական դատարան ընդդեմ Երևանի նոտարական տարածքի նոտար Նունե Սարգսյանի՝ վերջինիս կողմից ք. Երևան, Կենտրոն Ջ.Բայրոնի փողոց, 2/1 շենքի թիվ 2 բնակարանի վերաբերյալ 2023 թվականի նոյեմբերի 7-ին վավերացված առուվաճառքի պայմանագիրն անվավեր ճանաչելու պահանջի մասին[10],

- վերոնշյալ պահանջը ՀՀ վարչական դատարանի՝ 2024 թվականի փետրվարի 20-ի որոշմամբ վերահասցեագրվել է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր

[8] Տե՛ս սույն որոշման 1-ին կետը:
[9] Տե՛ս սույն որոշման 2-րդ կետը:
[10] Տե՛ս սույն որոշման 3-րդ կետը:

իրավասության քաղաքացիական դատարանին՝ այն պատճառաբանությամբ, որ հստակեցված պահանջով վեճը լուծվում է մասնավոր-իրավական նորմերի միջոցով, հետևաբար վիճելի իրավահարաբերությունը կրում է մասնավոր բնույթ, հետևաբար ներկայացված պահանջը ենթակա չէ ՀՀ վարչական դատարանում քննության[11],

- Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանը 2024 թվականի մարտի 14-ի որոշմամբ գտել է, որ սույն գործը ենթակա չէ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանին և այդ առնչությամբ դիմել է ՀՀ Վճռաբեկ դատարանի նախագահին՝ նշելով, որ հայցվորը վիճարկում է նոտարական գործողությունները, որոնց արդյունքում վավերացվել է անշարժ գույքի առուվաճառքի պայմանագիրը, որը տվյալ պարագայում որպես հանրային իրավահարաբերության կողմ հանդիսացող անձի գործողությունների կատարման վիճարկում է և ենթակա չէ քննության քաղաքացիական դատավարության կարգով: Ուստի հայցադիմումով ներկայացված հիմնական պահանջը ենթակա է ՀՀ վարչական դատարանի քննությանը[12]:

14. Նախորդ կետում մեջբերված փաստական հանգամանքները գնահատելով սույն որոշման 10-11.2-րդ կետերում վկայակոչված իրավադրույթների և արտահայտված իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ հարկ է նկատել, որ սկզբնապես ներկայացված հայցադիմումով Հովնան Շահբազյանի հայցի առարկան եղել է ք. Երևան, Կենտրոն Ջ.Բայրոնի փողոց, 2/1 շենքի թիվ 2 բնակարանի վերաբերյալ 2023 թվականի նոյեմբերի 7-ին վավերացված առուվաճառքի պայմանագիրը ոչ իրավաչափ ճանաչելու պահանջը: ՀՀ վարչական դատարանը, վերադարձնելով հայցադիմումը, մատնանշել է, որ ներկայացված պահանջից հստակ չէ, թե ներկայացվել է նոտարի գործողությունների իրավաչափությունը վիճարկելու վերաբերյալ պահանջ, թե գործարքն անվավեր ճանաչելու պահանջ՝ առաջարկելով ճշտել ոչ հստակ հայցային պահանջները, ինչպես նաև համալրել ոչ

[11] Տե՛ս սույն որոշման 5-րդ կետը:
[12] Տե՛ս սույն որոշման 6-րդ կետը:

բավարար փաստական տվյալները, մասնավորապես՝ ներկայացնել տվյալ նոտարական գործողությունը մերժելու վերաբերյալ ապացույցներ: Մինչդեռ, հայցադիմումի ուսումնասիրությունից հետևում է, որ հայցվորի փաստարկները հանգում են նրան, որ նոտարի կողմից համապատասխան նոտարական գործողությունը կատարելիս, այն է՝ առուվաճառքի պայմանագիրը վավերացնելիս, վերջինիս կողմից առանց պատշաճ փաստաթղթերի համապատասխանության ստուգման, անփույթ աշխատանքի արդյունքում վավերացվել է գործարք՝ թույլ տալով «Նոտարիատի մասին» ՀՀ օրենքի 40-րդ, 41-րդ հոդվածների խախտում, որի հետևանքով Հովնան Վասիլի Շահբազյանը կրել է նյութական մեծ վնասներ: Այսինքն՝ հայցվորը հայցադիմումով ներկայացված պահանջի հիմքում դրել է նոտարի գործողությունների իրավաչափության վիճարկումը:

Հետևաբար, չնայած այն հանգամանքին, որ կրկին ներկայացված հայցապահանջով հայցվորը խնդրել է անվավեր ճանաչել Երևանի նոտարական տարածքի նոտար Նունե Սարգսյանի կողմից ք. Երևան, Կենտրոն Ջ.Բայրոնի փողոց, 2/1 շենքի թիվ 2 բնակարանի վերաբերյալ 2023 թվականի նոյեմբերի 7-ին վավերացված առուվաճառքի պայմանագիրը, որպիսի ձևակերպմամբ պահանջը ձևական առումով ընդգրկվում է մասնավոր իրավահարաբերությունների ոլորտում, սակայն հայցի առարկան հիմնավորող փաստարկների ուսումնասիրությունից հետևում է, որ հայցվորի նպատակը նոտարի գործողությունների իրավաչափության վիճարկումն է, այն է՝ Երևանի նոտարական տարածքի նոտար Նունե Սարգսյանի կողմից ք. Երևան, Կենտրոն Ջ.Բայրոնի փողոց, 2/1 շենքի թիվ 2 բնակարանի վերաբերյալ 2023 թվականի նոյեմբերի 7-ին առուվաճառքի պայմանագիրը վավերացնելու նոտարական գործողության իրավաչափության վիճարկումը, որի հետևանքով վնաս է պատճառվել հայցվորին:

Այսինքն՝ սույն գործով պահանջի հիմքը ոչ թե առուվաճառքի պայմանագրի կնքման առնչությամբ ծագող մասնավոր հարաբերություններն են, այլ նոտարի գործողությունների վիճարկումը, հետևաբար սույն գործով իրավական վեճը բխում է ոչ թե մասնավոր, այլ հանրային իրավահարաբերություններից:

15. Վերոգրյալից հետևում է, որ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի հետևությունն այն մասին, որ թիվ ՎԴ/0221/05/24 գործն ըստ հայցի՝ Հովնան Շահբազյանի ընդդեմ Երևանի նոտարական տարածքի նոտար Նունե Սարգսյանի՝ վերջինիս կողմից ք. Երևան, Կենտրոն Ջ.Բայրոնի փողոց, 2/1 շենքի թիվ 2 բնակարանի վերաբերյալ 2023 թվականի նոյեմբերի 7-ին վավերացված առուվաճառքի պայմանագիրն անվավեր ճանաչելու պահանջի մասին, ենթակա է ՀՀ վարչական դատարանին, հիմնավոր է:

Ուստի, Հովնան Շահբազյանի հայցադիմումի հիման վրա հարուցված թիվ ՎԴ/0221/05/24 գործը ենթակա է ՀՀ վարչական դատարանի քննությանը:

Հիմք ընդունելով վերոշարադրյալը և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 26-րդ հոդվածով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի Ն Ք

թիվ ՎԴ/0221/05/24 գործն ըստ հայցի՝ Հովնան Շահբազյանի ընդդեմ Երևանի նոտարական տարածքի նոտար Նունե Սարգսյանի՝ վերջինիս կողմից ք. Երևան, Կենտրոն Ջ.Բայրոնի փողոց, 2/1 շենքի թիվ 2 բնակարանի վերաբերյալ 2023 թվականի նոյեմբերի 7-ին վավերացված առուվաճառքի պայմանագիրն անվավեր ճանաչելու պահանջի մասին, ենթակա է ՀՀ վարչական դատարանին:

ՀՀ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀ ԼԻԼԻԹ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ	**ՀՀ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՊԱԼԱՏԻ ՆԱԽԱԳԱՀ ՀՈՎՍԵՓ ԲԵԴԵՎՅԱՆ**	**ՀՀ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱԼԱՏԻ ՆԱԽԱԳԱՀԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ ԱՐՍԵՆ ՄԿՐՏՉՅԱՆ**

ՀՀ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ
ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ՊԱԼԱՏԻ
ՆԱԽԱԳԱՀ
ԱՐԹՈՒՐ ԴԱՎԹՅԱՆ

ՀՀ ՎՃՌԱԲԵԿ
ԴԱՏԱՐԱՆԻ ՔՐԵԱԿԱՆ
ՊԱԼԱՏԻ ՆԱԽԱԳԱՀ
ՀԱՄԼԵՏ ԱՍԱՏՐՅԱՆ